



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 009 4 - 21

Ձեռնարկողը՝

«ՆՕՄ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ
Ք. Երևան, Արուսյան 29

Գործունեությունը՝

**Փարաքար համայնքի հիմնական դպրոցի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

թիվ ԲՓ 0094-21

<<24>> Մայիսի 2021թ.

Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝

«ՆՕՍ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Արմավիրի մարզ, Փարաքար համայնք

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:

Համաձայն նախնական գնահատման հայտի Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հիմնական դպրոցի մասնաշենքի ամրացման և նոր մասնաշենքերի կառուցման շինարարական նախագիծը մշակվել է համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի, անշարժ գույքի նկատմամբ պետական իրավունքի վկայականի հիման վրա՝ 20684քմ ընդհանուր մակերեսով հողամասում: Գործունեության նպատակն է՝ սեյսմիկ անվտանգության բարելավման շրջանակներում ապահովել դպրոցի անվտանգությունը, սեյսմակայունությունը և ութ նոր մասնաշենքի կառուցումը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ դպրոցի կառուցումը որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի գործունեության տարածքը գտնվում է Երևան-Էջմիածին ճանապարհի դեպի «Զվարթնոց» օդանավակայան տանող խաչմերուկից 100-150մ հեռավորության վրա: Տտեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված



բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև տարածքով անցնող միգրացիոն ուղիներ:

Դպրոցի տարածքն իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք և բաղկացած է տարրական և միջին ուսումնական մասնաշենքերից, սպորտային և հանդիսությունների դահլիճներից, ինչպես նաև ադմինիստրատիվ հատվածից: Դպրոցի տարածքում ներկայիս գոյություն ունեցող շենք-շինությունները կառուցվել են 1968-70-ական թվականներին և չեն բավարարում ժամանանակակից նորմատիվ պահանջներին: Նախատեսվող դպրոցական համալիրն ունի ծավալահատակագծային բարդ կառուցվածք և բաղկացած է միմյանցից սեյսմիկ կարաններով բաժանված ութ մասնաշենքերից (A, B, C, D, E, F, G, H մասնաշենքեր), դպրոցի մասնաշենքերից B-ն եռահարկ է, իսկ G-ն երկհարկանի որոնք ծառայելու են տարրական և միջին դպրոցների համար՝ ներառելով դասասենյակները, բուժկետը, ուսուցչանոցները, սանհանգուցյները, մյուս 6 մասնաշենքերը նախագծված են որպես միահարկ կառույցներ, որտեղ տեղակայված են լինելու ճաշարանը, սպորտային և հանդիսությունների դահլիճները, գրադարանը, հանդերձարանները, ցնցուղարանները, ադմինիստրատիվ և սպասարկաման սենյակները և այլն: Նոր դպրոցը նախագծով նախատեսվում է կառուցել 800 աշակերտի համար: Դասասենյակները գոտևորված են ըստ I-IV, V-IX դասարանի աշակերտների համար: Դպրոցական համալիրն ունի ներքին բակ, որի վրա են բացվում ռեկրեացիոն գոտիների պատուհանները և պատշգամբները: Մասնաշենքում նախատեսվում են թեքահարթակներ և սակավաշարժ խմբերի համար վերելակ:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

1. Հողամասի ընդհանուր մակերեսը - 20684մ²
2. Կառուցապատման մակերեսը - 4155մ²
3. Բարեկարգման մակերեսը - 6955մ²
4. Ընդհանուր կանաչապատման մակերեսը - 8051մ²

Նախատեսվում են լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ճաշարանի հարմարություններն ըստ գործող նորմերի: Նախատեսվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն, յուրաքանչյուր աշակերտին 20մ³/ժ՝ նախատեսվում է 360մ² մակերեսով դպրոցի մարզադահլիճ:

Նոր կառուցվող բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն տաք և սառը ջրամատակարարմամբ:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների, միացվելու են գոյություն ունեցող արտաքին ցանցերին: Էներգախնայողության նպատակով դպրոցի տանիքի շեփ վրա տեղադրվելու են 126 հատ արևային վահանակներ 345 Վտ, որոնց էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրական սնուցման համար:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կառուցվող կաթսայատունը 31.2մ² մակերեսով, կաթսայատանը տեղադրվելու է 2 կաթսա՝ յուրաքանչյուրը 300-320 կվտ, որոնք կկազմեն ջեռմային պահանջի 65%-ը:

Մեքենաների և այլ տեխնիկայի կայանատեղին սահմանված է հրապարակի ներսում:



Համաձայն հայտի դպրոցի տարածքում առկա են դեկորատիվ 9 ծառեր, ինչպես նաև 15 թույաներ որոնք ընկնում են անմիջական շինարարության գոտում: Դեկորատիվ ծառերը տեղակայված են գոյություն ունեցող դպրոցի շինության հիմքերին շատ մոտ: Այդ ծառերի արմատները սերտաճած են կառույցի հիմքերի մեջ, ուստի քանդման աշխատանքների ժամանակ այդ 9 ծառերը նախատեսվում է հատել:

Համաձայն նախնական գնահատման հայտի գոյություն ունեցող դպրոցի տարածքում քանդման/ապամոնտաժման աշխատանքների շրջանակը ներառում է.

1. Միջհարկային սալերի, պատերի և միջնորմերի կազմատում:
2. Տանիքի ծածկույթների ապամոնտաժում:
3. Գլխավոր մուտքի և մուտքերի հարթակների և աստիճանների ապամոնտաժում:
4. Շենքի ներսում առկա ինժեներական ենթակառուցվածքների ապամոնտաժում:
5. Պատուհանի և դռների ապամոնտաժում՝ շեպերի քանդումով:
6. Գլխավոր մուտքի և մուտքերի հարթակների և աստիճանների ապամոնտաժում և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացումը բաժանված է երկու փուլի՝ նախապատրաստական փուլ և հիմնական փուլ:

Նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով,

գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում,

ժամանակավոր շինությունների տեղադրում գոյություն ունեցող մարզադաշտի տարածքում:

Հիմնական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

1. Քանդման/ապամոնտաժման աշխատանքեր:
2. Շինարարական/մոնտաժման աշխատանքների իրականացում:

Դպրոցի տարածքում գոյություն ունեցող շինության քանդում/ապամոնտաժում և շին աղբի տեղափոխում ու հրապարակի մաքրում՝ ՀՀ կառավարության 2019թ.փետրվարի 6-ի N 87-Ա որոշման համաձայն, տարածքի համահարթեցում և հողային աշխատանքներ:

Շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութը սահմանված կարգով անհատույց հանձնվելու է դպրոցի կառուցման համար մրցութային գործընթացում ընտրված շինարարական կազմակերպությանը: Քանդման և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքներն իրականացվելու են ընտրված շինարարական կազմակերպության հաշվին, ինչը նույնպես ամրագրված է կառավարության սույն որոշման մեջ:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ 4155մ² մակերեսով տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար, տարածքների ջրցանման համար 1371.15մ³, իսկ հողի (գրունտի) խոնավացման, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար՝ 584.5մ³: Շինարարության փուլում ընդհանուր ջրապահանջը կազմելու է 1955.65մ³, որը մատակարարվելու է համայնքի ջրամատակարարման ցանցից:

Աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի տարածքում, ինչը կբացառի կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները:

Տարածքում հողային աշխատանքեր կատարելուց առաջ նախատեսվում է իրականացնել առկա բուսահողի մերկացում, կուտակում և պահպանում հրապարակի հատուկ առանձնացված



տեղում՝ հետագայում տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Դպրոցի կառուցման հողային աշխատանքների դեպքում ընդհանուր հանույթը կազմում է 7322.85մ³, որից 3105.05մ³ հետագայում կօգտագործվի հետլիցքի համար, իսկ 257մ³ ծավալը՝ որպես բուսահող, կպահպանվի և հետագայում օգտագործվելու է հետլիցքի համար: Մնացած 1706.6 մ³ ծավալը տողափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարության փուլում առաջանալու են մոտ 21000.տ շինարարական աղբ և 3400 կգ կենցաղային աղբ: Կենցաղային աղբը հավաքվելու է հրապարակում տեղադրվող աղբի համար նախատեսվող աղբամաններում, այնուհետև տեղափոխվելու է աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, թրթուրավոր եքսկավատոր, ավտոամբարձիչ, ավտոկռունկ, թրթրան խորքային, բետոնամուղ պոմպ, եռակցման ապարատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարության համար անհրաժեշտ բետոնը և շաղախը կառաքվեն Երևան քաղաքի կամ Արմավիրի մարզի մոտակա բետոնաշաղախային հանգույցից: Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ բետոն, ամրանային ձողեր, երեսապատման սալիկներ, ներքին հարդարման, ջերմամեկուսիչ նյութեր և այլն:

Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, աշխատանքների ընթացքում ներգրավվելու են 45 մարդ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի կանաչապատում և բարեկարգում: Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների շրջանակն ընդգրկում 8051.3մ² տարածք, կառուցապատման մակերեսը կազմելու է 4155մ², բարեկարգվելու է 6955մ² տարածք, ներառյալ՝ սալվածքի իրականացում, ասֆալտապատում, և ներքին բակ:

Տնկվելու են՝ կատալպա, ցերցիս և սոճի: Նշված աշխատանքներն իրականացվելու են տարածքի բուսահողով զբաղեցրած հատվածներում, ինչի համար լրացուցիչ բուսահող չի պահանջվում:

Մոտակա տարածքում ոռոգման ջրագծերը բացակայում են, ոռոգման ջուր նախատեսվում է բերել մոբիլ տեխնիկայի միջոցով՝ դպրոցի տնօրինության ջանքերով: Դպրոցից 50մ հեռավորության վրա առկա են տնամերձ բնակելի տներ և կից շինություններ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ՝ մինչև շինարարության ավարտը: Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով շինհրապարակի պարբերաբար ջրցանում,
- շինարարական մեքենաների երթևեկության կազմակերպում՝ համապատասխան չափաքանակներով ծածկված բեռնատարներով և շինհրապարակից դուրս եկող ավտոմեքենաների լվացված անվաղողերով,



1. շինհրապարակում նյութերի և թափոնների պահումը բետոնե տարածքում՝ ծածկված վիճակում,
2. շինհրապարակի ցանկապատում, ցուցանակների ու պաստառների տեղադրում,
3. փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի հսկողություն՝ գործիքային չափագրումների կատարմամբ,
4. աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին, մինչև ժամը 18:00,
5. անսարք վիճակում մեքենաների և սարքավորումների օգտագործման բացառում,
6. մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կանոնավոր մոնիթորինգի իրականացում,
7. բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
8. շինարարության ընթացքում աղբի ու շինարարական թափոնների տարանջատում, դասակարգում ըստ տեսակների՝ պինդ, հեղուկ և վտանգավոր,
9. հողաբուսաշերտի հանումը, պահպանումն ու հետագա օգտագործումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն,
10. բանվորական և այլ անձնակազմի ապահովում՝ սեզոնային արտահագուստով և այլ անձնական պաշտպանիչ միջոցներով (սաղավարտ, շնչառական դիմակ, պաշտպանիչ ակնոց, ականջակալ և անվտանգության գոտի),
11. դպրոցի կանաչապատված տարածքի աճի և վիճակի մշտադիտարկումներ,
12. աշխատանքների և արտակարգ իրավիճակների անվտանգության ապահովում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվելու է ծրագրի արժեքի մոտ 1.5%-ը:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գործունեության շինարարությունը և շահագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվող գործունեության վերաբերյալ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արմավիրի մարզպետարանը, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է, հաշվի առնելով նաև ստացված դիտողությունները և առաջարկությունները:

Ինչ վերաբերում է արտակարգ իրավիճակների նախարարության կողմից դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի համար նկուղային տարածքի նախատեսման առաջարկին, ապա ձեռնարկողի հիմնավորմամբ ՍԱԲ ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության և ԱԶԲ-ի միջև գործող վարկային համաձայնագրով կառուցվող մասնաշենքում նկուղային տարածք ներառված չէ:



Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա ցերեկային ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և մակարդակի:

3. Վերանորոգվող շենք-շինությունները ծածկել համապատասխան բարձրության անջրթափանց թաղանթով:

4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

5. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները, ներառյալ առողջապահության նախարարի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջները:

6. Համաձայն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

7. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

8. Հայտով ամրագրված ծառերի հատումը կատարել, համայնքապետարանի թույլտվությամբ:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՆՕՍ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Փարաքար համայնքի հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ մասնագետ՝

Շ. Նախարյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» տնօրենի տեղակալ՝

Խ. Մարտիրոսյան

Ընդամենը՝ 6 էջ